Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզ
Արգավանդի համայնքապետարան

✉ գ. Արգավանդ
☎ /093.99-02-09/
«24» «10» 2017թ.
N 182

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ուղարկում Արգավանդ համայնքի ավագանու արտահերթ նիստի որոշումները.

Առդիր 5 թերթ

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 112.10/14482-17
24 10 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈԻ

ԱՐՏԱՀԵՐԹ 12-ՐԴ ՆԻՍՏ

16 Հոկտեմբերի 2017թ. գ.Արգավանդ

ԿԱՅԱՑԱՎ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԸ ԱՎԱԳԱՆՈԻ 4 ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Համայնքի ղեկավար Արշավիր Աղաջանյանը ներկայացրեց հերթական նիստի քննարկմանը ներկայացվող հարցերը և առաջարկեց հաստատել օրակարգը.

Որոշում թիվ 61

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի ավագանու 2017թ. Հոկտեմբերի 16-ի արտահերթ նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռն |
| --- | --- | --- | --- |
| 1.Տեր-Գրիգորյան Շմավոն | | | |
| 2.Ոսկանյան Խաչատուր | | | |
| 3. Մկրտչյան Արթուր | | | |
| 4.Մաթևոսյան Սերոբ | | | |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ
ՆԻՍՏԻ ԹԻՎ. 61 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳԸ

1.Համայնքի ոռոգման համար նախատեսված պոմպակայանների վերականգնման և գործարկման մասին

Զեկ. Ա. Առաջանյան

2.Համայնքի բնակիչների դիմումների քննարկման մասին

Զեկ. Ա. Առաջանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

16 Հոկտեմբերի 2017 թ. գ. Արգավանդ

ՈՐՈՇՈՒՄ N 62

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊՈՄՊԱԿԱՅԱՆՆԵՐԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ
ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավար Ա.Աղաջանյանը զեկուցեց այն մասին ,որ ջրի սակավության պատճառով ձախողվում է աշնանացանի աշխատանքները,այս պահի դրությամբ ոչ մի հա աշնանացան չի կատարվել, խաղողի այգիները հողով ծածկելու համար անհրաժեշտ է ծածկելուց առաջ ոռոգել,այդ իսկ պատճառով առաջարկում եմ վերանորոգել և շահագործել «հիմնական ջրատարի » սկզբնականում գտնվող 2 խորքային հորերը: Ավագանու անդամների կողմից առաջարկը արժանացավ հավանության:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ավագանին որոշում է.

1.Թույլատրել համայնքի ղեկավարին 2017թ.-ի բյուջեի շրջանակներում վերանորոգելու և վերագործարկելու հիմնական ջրատարի սկզբնամասում գտնվող երկու խորքային հորերը:
2.Հաշվի առնելով այն փաստը ,որ վերանորոգման աշխատանքների համար մրցույթ հայտարարելուց հետո բավական ժամանակ է անհրաժեշտ , որը կխանգարի աշնանացանին և աշնանային ոռոգումներին ,ուստի թույլատրել համայնքի ղեկավարին վերանորոգման աշխատանքները կազմակերպել գնումների մասին օրենքի 23 հոդվածի 2 րդ կետի համաձայն հրատապ կարգով գնում կատարելով մեկ անձից:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռն |
|---|---|---|---|
| 1.Տեր-Գրիգորյան Շմավոն | | | |
| 2.Ոսկանյան Խաչատուր | | | |
| 3. Մկրտչյան Արթուր | | | |
| 4.Մաթևոսյան Սերոբ | | | |

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

16 Հոկտեմբերի 2017 թ. — գ. Արգավանդ

# ՈՐՈՇՈՒՄ N 63

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքապետարան էին դիմել համայնքի բնակիչներ Տիգրան Աղաջանյանը, Վարդուհի Նիկոլյանը, իսկ Մարզպետարան էր դիմել Վարդուհի Գևորգյանը, որը գրությամբ ուղարկվել էր համայնքի ղեկավարին դրամական օգնության խնդրանքով:Համայնքի ղեկավարը զեկուցեց ,որ համայնքապետարանը օգնություն տրամադրի այն բնակչին ,որը ավելի կարիքավոր է ,քանի որ չկան համապատասխան դրամական միջոցներ:Ավագանու անդամները քննարկելով տվեցին իրենց համաձայնությունը և որոշեցին դրամական օգնություն հատկացնել համայնքի բնակիչներ Տիգրան Աղաջանյանին,քանի որ նա ունի առողջության հետ կապված խնդիրներ և գտնվում է սոցիալապես ծայրահեղ ծանր վիճակում, և Վարդուհի Նիկոլյանին ,որը միայնակ մայր է և նույնպես սոցիալապես ծանր վիճակում է գտնվում: Վարդուհի Գևորգյանի դիմումը մերժվել է:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները.

Ավագանին որոշում է.

1.Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի բնակիչներ Տիգրան Աղաջանյանին և Վարդուհի Նիկոլյանին հատկացնել դրամական աջակցություն համաձայն հավելված 2-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Տեր-Գրիգորյան Շմավոն | | | |
| 2.Ոսկանյան Խաչատուր | | | |
| 3. Մկրտչյան Արթուր | | | |
| 4.Մաթևոսյան Սերոբ | | | |

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված 3

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ
ՆԻՍՏԻ ԹԻՎ. 63 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

1.Աղաջանյան Տիգրան Պետիկի – 30000/ երեսուն հազար/ ՀՀ դրամ

2.Նիկոլյան Վարդուհի Մկրտիչի -30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ